



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 600

Նիւ Եորքի, Նիւ Ճըրզիի եւ Գընէթիքէթի  
Համայնքներու Հոգեւոր Հովիւներուն


Ինչպէս գիտէք, Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան 1985  
Դեկտեմբեր 22ը ``Կոմիտաս Վարդապետի Օր`` յայտարարած է թեմին մէջ,  
եւ թելադրած որ նոյն օրը բոլոր եկեղեցիներուն մէջ մասնաւոր Հոգե-  
հանգստեան Պաշտօն կատարուի եւ պատշաճ յայտագիրով մը պանծացուի ան-  
մահն Կոմիտաս Վարդապետի յիշատակը:

Կիրակի Դեկտեմբեր 22ին Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր  
Ս. Պատարագ պիտի մատուցանէ Առաջնորդ Սրբազան Հայրը: Ապա մատաղ պիտի  
սպասարկուի եւ յետ միջօրէի ժամը 3.00ին որակաւոր յայտագիր մը պիտի  
գործադրուի:

Եթէ ձեր համայնքին մէջ, Հոգեհանգստեան Պաշտօնէն անկախ, կարե-  
լիութիւնը չէք ունեցած յատուկ հանդիսութիւն մը կազմակերպել՝ նորին  
Սրբազնութեան փափաքն է որ քաջալերէք ձեր ծխականները որպէս զի Ս.  
Վարդան Մայր Տաճարին մէջ տեղի ունենալիք ոգեկոչման հանդիսութեան  
մասնակցին, եւ դուք ալ իր հիւրը ըլլաք:

Հաճեցէք ներփակ գտնել երկու հրաւերներ:

Աղօթակից

  
Խաժակ Վրդ. Պարսամեան  
Առաջնորդի Փոխանորդ

Դեկտեմբեր 10, 1985  
Նիւ Եորք, Ն.Ե.



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 598

**Վիճակի Հոգեւոր Հովիւներուն  
Եւ Եկեղեցական Խորհուրդներու Ատենապետներուն**

Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի հրահանգով 1985 Դեկտեմբեր 22ի կիրակին թեմին մէջ կը յայտարարուի կոմիտաս վարդապետի Օր:

Նկատի ունենալով որ այս տարի Մեծ Եղեռնի 70-ամեակն է, ինչպէս նաեւ մեծանուն կոմիտաս վարդապետի մահուան 50-ամեակը, նորին Սրբազնութեան թելադրութիւնն է որ կիրակի Դեկտեմբեր 22ին, յաւարտ Ս. Գատարազի, մասնաւոր Հոգեհանգստան Գաշտօն կատարուի կոմիտաս վարդապետի հոգիին համար, եւ այդ առթիւ ոգեւոչումի յատուկ հանդիսութիւն մը կազմակերպուի թեմի քոլոր եկեղեցիներուն մէջ՝ նուիրուած անմահ կոմիտաս վարդապետի անձին ու գործին:

Կոմիտաս վարդապետ որպէս երաժշտագէտ, երգահան, ժողովրդական երգեր հաւաքող ու յայտնաբերող, երգիչ, խմբավար եւ դաստիարակ՝ մեր հոգեւոր եւ մանաւանդ ժողովրդական երաժշտութիւնը իր ազգային վառ նկարագիրով, ինքնատպութեամբ, երաժշտական նրբութիւններով եւ յուզականութեամբ բարձրացուց միջազգային պատուաբեր մակարդակի:

Կոմիտաս վարդապետի ստեղծագործական եւ երաժշտագիտական հանճարը բացառիկ երեւոյթ մը է թէ ազգային եւ թէ միջազգային երաժշտական կեանքին մէջ:

Լաւ ծրագրուած եւ ոգեշնչիչ յայտագիրներով անգամ մը եւս պանծացնենք մեր ժողովուրդի արժանաւոր զաւակ կոմիտաս վարդապետի յիշատակը:

Բարի եղէք նկատի ունենալ եւ գործադրել Առաջնորդ Սրբազան Հօր վերոյիշեալ հրահանգը:

Աղօթակից

Խաժակ վր. Գարսամեան  
Խաժակ վր. Գարսամեան  
Առաջնորդի Փոխանորդ

Հոկտեմբեր 16, 1985  
Նիւ Եորք, Ն.Ե.